ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԲԸՀԱՇՁԲ-14/13 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/13 պայմանագրում 2018 թվականի հոկտեմբերի 24-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառուի կողմից ներկայացրած գրություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 30 օրացուցային օր:
Փոփոխության հիմնավորում	ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետ, պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և պայմանագրի 8.4 կետ:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 5
01.12.2014թ. կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/13 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան 24 հոկտեմբերի 2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Բաղրամյանշին>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Գ. Վարդանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 01.12.2014թ. ՀՀ Արմավիրի մարզի գ. Մուսալեռի Ֆ. Վերֆելի անվան դպրոցի վերակառուցման աշխատանքների իրականացման համար կնքված N ԲԸՀԱՇՁԲ-14/13 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 2018 թվականի փետրվարի 14-ին կնքված N 3 համաձայնագրի հավելված N 1-ով սահմանված օրացուցային գրաֆիկի 4-րդ տողում <<31.10.2018թ.>> բառերը փոխարինել <<30.11.2018թ.>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	**Կապալառու՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011011971 ՀՎՀՀ 02565827	<<Բաղրամյանշին>> ԲԲԸ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Լոռնագոգ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Հ/Հ 115004673956 ՀՎՀՀ 04600132
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան (ստորագրություն) Կ.Տ.	_____ Գ. Վարդանյան (ստորագրություն) Կ.Տ.